



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ  
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Արովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. hsuagt abovyan.kotayq@mta.gov.am

15-ը մայիսի 2023թ.

Արովյան համայնքի ղեկավար Էդուարդ Բաբայանի ուղերձը  
ընտանիքի միջազգային օրվա առիթով

1993 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան մայիսի 15-ը սահմանել է ընտանիքի միջազգային օր, այս կարևոր խորհուրդ ունեցող օրը ամրագրված է նաև «ՀՀ տոների և հիշատակի օրերի մասին» օրենքում:

Ընտանիքը յուրաքանչյուր հասարակության և պետության մեջ թեպետ փոքր, բայց ամենից կարևոր օղակն է, քանզի առաջնահերթ ընտանիքում է ձևավորվում, դաստիարակվում յուրաքանչյուր քաղաքացի: Առողջ, ամուր ու կիրթ ընտանիքները հիմնաքար են յուրաքանչյուր քաղաքակիրթ ու զարգացած պետության համար. միևնույն ժամանակ ընտանեկան միջավայրում առկա մի շարք խնդիրներ զգալիորեն բարդացնում են անձի սոցիալականացումը հասարակության մեջ:

Միասնական ու սրտացավ վերաբերմամբով մենք պետք է հասնենք մեր երկրի, մեր համայնքի ընտանիքներում առկա սոցիալական պաշտպանվածության խնդիրների լուծմանը, նպաստենք համայնքի ընտանիքների կենսամակարդակի բարելավմանը: Անհերքելի է, որ առողջ ու մրցունակ հասարակության ձևավորման հիմքում կարևոր դեր ունեն երջանիկ ու բարեկեցիկ ընտանիքները:

Սիրելի՛ հայրենակիցներ.

Հայերիս համար ընտանիքը մշտապես առաջնային ու բարձր արժեք է, որտեղ մարդկանց միավորում է ջերմ մթնոլորտը, սերն ու համերաշխությունը: Ընտանիքի միջազգային օրվա առիթով շնորհավորում եմ բոլորիս և մաղթում քաջառողջություն, բարեկեցություն և ընտանեկան երջանկություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ